

Ալվարդ Բարխուդարյան

ΕΛΛΗΝΙΚΗ ΓΛΩΤΤΑ

10.09.2018

ԴԱՍ 1

Ա. Այբուբեն

Բ. Չայնավորներ

Գ. Երկբարբառներ

Դ. Բաղաձայններ

ALPHABETUM
ԱՅԲՈՒԲԵՆ

Հին հունարենն ունի 24 տառ:

A	α	ալֆա	ա	N	ν	ն(յ) ու	ն
B	β	բետա(վիտա)	բ (վ)	Ξ	ξ	քսի	քս
Γ	γ	գամմա	գ	O	ο	օմիկրոն	օ
Δ	δ	դելտա	դ	Π	π	պի	պ
E	ε	էփսիլոն	է	P	ρ	ռո	ռ
Z	ζ	ձ(զ)ետա	ձ	Σ	σ, ς	սիգմա	ս
H	η	էտա	է	T	τ	տաու	տ
Θ	θ, θ	թետա (ֆիտա)	թ(ֆ)	Υ	υ	յու(ի)փսիլոն	յու (ի)
I	ι	յո (ի)տա	ի	Φ	φ, ϕ	ֆի	ֆ
K	κ	կապպա	կ	X	χ	խի	խ
Λ	λ	լամբդա	լ	Ψ	ψ	փսի	փս
M	μ	մ(յ)ու	մ	Ω	ω	օմեգա	օ

Հին հունարենում մեծատառերն օգտագործվում են նոր տողով սկսվող նախադասություններում, կամ ուղղակի խոսքում, ինչպես նաև հատուկ անուններում, աշխարհագրական եւ ազգերի անվանումներում:

Հին հունարենում բառը կարող է ավարտվել ցանկացած ձայնավորով, իսկ բաղաձայններից միայն ν , ρ , ς բաղաձայններով:

Բերված աղյուսակում ներկայացված է հին հունարենի տառերի արտասանությունն ըստ Էրազմ Ռոթերդամացու (լատինական) եւ դրա հայերեն համարժեքները, փակագծերում ներկայացված է ըստ Ռեյխլինի (բյուզանդական) արտասանությունը:

VOCALES ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Հին հունարենն ունի յոթ ձայնավոր՝ a , ϵ , η , o , ω , i , u : Չայնավորները կարող են լինել երկար եւ կարճ: Երկար ձայնավորներն են η , ω , կարճ ձայնավորներն են ϵ , o , մնացած երեք ձայնավորները՝ a , i , u կարող են լինել երկար եւ կարճ:

η	ϵ	a
երկար	կարճ	երկար եւ կարճ
ω	o	i
		u

Ներկայումս հունարենի երկար եւ կարճ ձայնավորների արտասանության մեջ տարբերություն չի դրվում:

DIPHTONGES ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ

Մեկ ձայնավորի պես արտասանվող երկու ձայնավորներ կոչվում են երկբարբառ կամ երկհնչյուն: Հին հունարենում երկբարբառների երկրորդ ձայնավորը i կամ u ձայնավորն է: Երկբարբառների i ձայնավորը արտասանվում է հայերենի y ձայնավորի, իսկ u - ն՝ հայերենի $-ու$ ձայնավորի կամ $-վ$ բաղաձայնին մոտ հնչյունով: Երկբարբառների u ձայնավորի արտասանությունը մոտ է անգլերենի w - ին ձայնավորից առաջ դիրքում՝ *cow* – կով: Երկբարբառները միշտ երկար են, բացառությամբ բառավերջին ai , oi երկբարբառների:

i	καιρός	կայրոս	ժամանակ
oi	οἶκος	օյկոս	տուն
ei	εἶρήνη	էյրենե	խաղաղություն
i	σίος	հյույոս	որդի

αυ	σταῦρος	ստաու(վ)րոս	խաչ
ευ	βασιλεύς	բասիլե(վ) ու ս	թագավոր
ηυ	προσηυχόμενη	պրոսէուխումէն	աղոթում էի

Հունարենում ου (ու) տառը հայերենի պես արտահայտվում է երկու տառով՝ օ եւ ս:

οὐρανός	ուրանոս	երկինք
δούλου	դուլու	ստրուկի
οὐκ	ուկ	ժխտական չ, ոչ

Եթե երկբարբառի երկրորդ ձայնավորի վրա դրված է երկու կետ (··) ապա այդ ձայնավորը կարդացվում է առանձին կամ ս - ի հետ վ:

ἀ·ι·διως	աիդիոս եւ ոչ թե այդիոս	հավիտենական, հավերժ
Μω·υ·σῆς	Մոյուսես, Մովսես	Մովսես

CONSONANTES ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Հունարենի բաղաձայնները արտասանվում են այնպես, ինչպես որ գրվում են՝

- β - բ
- μ - մ
- π - պ
- κ - կ եւ այլն

Սակայն կան որոշ կանոններ մի քանի բաղաձայնների վերաբերյալ, որոնք անհերաժեշտ է իմանալ:

Ա. γάμμα (γ) տառը γ, κ, χ, ξ տառերից առաջ արտասանվում է իբրև ն՝
γγ - նգ, γκ - նկ, γχ - նխ, γξ - նքս

ἄγγελος	անգելոս	հրեշտակ
ἄγκυρα	անկյուրա	խարիսխ
ἀνάγκη	անանկէ	ճակատագիր
λογχή	լոնխէ	նիզակ
σαλπίγξ	սալպինքս	փող (շեփոր)
σφίγξ	սֆինքս	սֆինքս

Բ. Բառակզբում եւ բառամիջում գրվում է σ (սիգմա) եւ բառավերջում ς (ստիգմա) տառերը:

σοφία	իմաստություն
κόσμος	աշխարհ, տիեզերք
σταῦρος	խաչ
σεῖσμος	ցնցում
ἄστρο	աստղ
ἐκκλησία	ժողով, եկեղեցի

Գ. Հին հունարենում ξ եւ ψ բաղաձայնները արտահայտվում են մեկ տառով եւ արտասանվում են համապատասխան ξ եւ ψ բարդ բաղաձայններով՝

ψυχή	փայուխե	հոգի, անձ
ψευστής	փսեուստես	խաբեբա
ἄξιος	աքսիոս	արժանի, համապատասխան
νύξ	նյուքս	գիշեր
Ξερξής	Քսերքսես	Քսերքսես
δόξα	դոքսա	կարծիք, տեսակետ, Նոր Կտակարանում՝ փառք

Դ. Հունարենի ζ տառը արտասանվում է հայերենի δ կամ $զ$ տառերին, իսկ θ տառը հայերենի $\թ$ տառին համապատասխան: Հունարենի ρ տառը արտասանվում է ռուսերենի ρ տառին համապատասխան:

θεάτρον	թեատրոն	թատրոն
ἄνθρωπος	անթրոպոս	մարդ
γάζα	գաձա	գանձ
ζωή	ձոէ կամ զոէ	կյանք

ԴԱՍ 2

Ա. Շունչ

Բ. Շեշտ

Գ. Կետադրության նշաններ

SPIRITUS

ՇՈՒՆՉ

Հին հունարենում ձայնավորով, երկհնչյունով, կամ ը տառով սկսվող բառերում պարտադիր դրվում է շունչի նշանը: Շունչը կարող է լինել թեթել՝ (´) *ἀγρός* (ագրոս) դաշտ եւ թանձր՝ (´) *ἥλιος* (**հելիոս**) արեւ եւ դրվում է բառասկզբի ձայնավորի կամ երկհնչյունի վրա:

Թեթել շունչը չի արտասանվում, թանձր շունչը արտասանվում է եւ համապատասխանում է հայերենի **հ** հնչյունին:

Հունարենում *ρ, υ* տառերով սկսվող բառերում դրվում է միայն թանձր շունչ՝ *ῥήτωρ* (հռետոր) հռետոր, *ῥῆμα* (հյուդոր) ջուր: Բառամիջում երկու *ρρ* ունեցող բառերում դրվում է երկու շունչ՝ թեթել եւ թանձր՝ *ἐρρώμενος* (է ռումենոս) ուժեղ, այն արտասանվում է հայերենի **ռ** հնչյունի պես: Երկհնչյունով սկսվող բառերում շունչը դրվում է երկհնչյունի երկրորդ ձայնավորի վրա՝ *αἷμα* (հայմա) արյուն, *οἶκος* (ոյկոս) տուն:

Մեծատառով սկսվող բառերում շունչը դրվում է ձայնավորի ձախ կողմից՝ *Ἰησοῦς* (Իեսուս) Հիսուս: Երկհնչյունով սկսվող անձնանուններում շունչը դրվում է երկրորդ ձայնավորի վրա՝ *Αἴγυπτος* (**Այգյուպտոս**) Եգիպտոս:

<i>ἀγρός</i>	ագրոս	դաշտ
<i>ἥλιος</i>	հելիոս	արեւ
<i>ῥήτωρ</i>	հռետոր	հռետոր
<i>ῥῆμα</i>	հյուդոր	ջուր
<i>ἐρρώμενος</i>	էռումենոս	ուժեղ
<i>οἶκος</i>	ոյկոս	տուն
<i>αἷμα</i>	հայմա	արյուն
<i>Ἰησοῦς</i>	Իեսուս	Հիսուս
<i>Ἱεροσολήμ</i>	Իերուսալեմ	Երուսաղեմ
<i>Αἴγυπτος</i>	Այգյուպտոս	Եգիպտոս
<i>Ἱεροσόλυμα</i>	Հիերոսոլյումա	Երուսաղեմ

ACCENTUS

ՇԵՇՏ

Նոր Կտակարանի հունարենի վերջին տարիներին լույս տեսած դասագրքերում Շեշտի թեման երբեմն չի ուսումնասիրվում: Պատճառաբանությունները այն են, որ կանոնը դժվար է, ընթերցվող տեքստերում շեշտը դրվում է եւ այլն: Դասավանդման տարիներին մենք էլ ենք համոզվել դրանում եւ ուսանողներից պահանջում ենք միայն Շունչի կանոնների գիտելիք: Սակյան մնում ենք այն համոզման, որ Շունչի կանոնը շատ կարեւոր է, իսկ որոշ բազմիմաստ բառերի համար՝ անհրաժեշտ, ուստի համառոտ ներկայացնում ենք այդ կանոնները:

Հունարենում գրեթե բոլոր բառերը ունեն շեշտ, որը դրվում է ձայնավորով կամ երկինչունով վանկերի վրա եւ այն խիստ կանոնակարգված էր: Շեշտի վերաբերյալ կան ընդհանուր եւ հատուկ կանոններ:

Ընդհանուր կանոններ

Ա. Հին հունարենում շեշտը կարող է լինել

սուր (´)	λόγος	-	բան, բառ
երկար (~)	δῶρον	-	նվեր, ընծա
բութ (`)	ἀδελφός λέγει	-	եղբայրը ասում է

Բ. Շեշտը կարող է դրվել վերջին երեք վանկերից մեկի վրա:

ա. սուր շեշտը կարող է դրվել վերջին, նախավերջին եւ վերջից երրորդ վանկի վրա՝

σίος	որդի
κόσμος	աշխարհ
γίνομαι	լինել, դառնալ

բ. երկար շեշտը կարող է դրվել միայն նախավերջին կամ վերջին վանկի վրա՝

δοῦλος	ստրուկ, ծառա
ὄδῳ	ճանապարհին, ճանապարհով

գ. վերջին վանկի վրա դրված սուր շեշտը դառնում է բութ շեշտ, եթե նրան, առանց կետադրական նշանի, հաջորդում է մեկ այլ բառ՝

σίος	Θεοῦ	Աստծո որդին,
ἀδελφός	λέγει	եղբայրը ասում է

Բացառություն են կազմում հարցական դերանունները. այստեղ սուր շեշտը չի փոխվում բութի՝ τίς εἶ; ո՞վ ես:

Գ. Սուր շեշտը կարող է դրվել ինչպես երկար, այնպես էլ կարճ վանկերի վրա՝

ὥρα	ժամ
φόβος	վախ
ἀρχή	սկիզբ

Իսկ երկար շեշտը՝ միայն երկար վանկերի վրա՝

δῶρον	նվեր, ընծա
δοῦλος	ստրուկ, ծառա
αἷμα	արյուն

Դ. Վերջից երրորդ վանկի վրա կարող է դրվել միայն սուր շեշտ, ընդ որում միայն այն դեպքում, եթե վերջին վանկը կարճ է՝ διδάσκαλος ուսուցիչ: Երկհնչյունները համարվում են երկար վանկ, սակայն վերջին վանկի *οι եւ αι* երկհնչյունները իբրև կանոն համարվում են կարճ:

Ե. Եթե վերջին վանկը երկար է, իսկ շեշտը դրված է նախավերջին վանկի վրա, ապա այն կարող է միայն սուր լինել՝

λόγου	խոսքի
ἀνθρώπου	մարդու

Զ. Եթե վերջին վանկը կարճ է, իսկ շեշտը դրված է նախավերջին վանկի վրա, որը երկար է, ապա շեշտը կարող է միայն երկար լինել՝ αἷμα արյուն:

Հատուկ կանոններ

Հատուկ կանոն բայերի համար

Եթե շեշտադրության կանոնները թույլ են տալիս, ապա բազմավանկ բառերում շեշտը դրվում է վերջից երրորդ վանկի վրա:

Հատուկ կանոն գոյականների եւ ածականների համար

1. Եթե ընդհանուր կանոնները թույլ են տալիս, ապա բառը պահպանում է եզակի թվի՝ ուղղականում դրված բառի շեշտադրությունը:

PUNCTUATIO

ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Ստորակետ (,) ինչպես հայերենում, ռուսերենում:

Վերջակետ (.) ինչպես ուսերենում:

(.)

Կոլոն դրվում է տողի վերելում, համապատասխանում է հայերենի բութ կամ միջակետ նշաններին:

Հարցական (;)

Հունարեն ՆԿ- ի կետադրության նշանները միշտ չէ, որ համընկնում են գրաբար բնագրի հետ, հունարեն բնագրերում դրանք նույնպես երբեմն տարբեր են:

Վարժություններ

Ա. Կարդացեք բառերը հունարենի շունչին համապատասխան

ἀγρός	ագրոս	դաշտ
αἰρέομαι	հայրեոմայ	ընտրել. որոշել
ἐλπίς		հույս
εὕρισκω		գտնել, հայտնաբերել
ἔργον		գործ
Ἑρμῆς		Հերմես
ἐρρώμενος		ուժեղ
ἥλιος		արև
ἡμέρα		օր
Ἰταλία		Իտալիա
ἰκανός		արժանի
ὄνομα		անուն
ὄραω		տեսնել, նայել
ῥῆμα		խոսք
ῥήτωρ		հռետոր
Ῥώμη		Հռոմ
ὔδωρ		իուր
υἱός		որդի
ὠφέλεω		օգնել
ώρα		ժամ, ժամանակ

Բ. Կարդացեք, համեմատեք հունարեն եւ գրաքար բնագրերի կետադրութեան նշանները:

Մկ. Ա.24 Դί ἡμῖν καὶ σοὶ Ἰησοῦ Ναζαρηνέ; ἦλθες ἀπολέσαι ἡμᾶς; οἶπδά σε τίς εἶπ, ὁ ἅγιος τοῦ θεοῦ.

Զի կայ՞ մեր եւ քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ, ով ես, սուրբ Աստուծոյ:

Մկ. Ա.27 Դί ἐστὶν τοῦτο; διδαχὴ καινὴ κατ' ἐξουσίαν καὶ τοῖς πνεύμασι τοῖς ἀκαθάρτοις ἐπιτάσσει καὶ ὑπακούουσιν αὐτῷ.

Զի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ եւ այսոց պղծոց սաստէ, եւ հնազանդին նմա:

ԴԱՍ 3

- Ա. Սահմանական ներկա
- Բ. *Լինել* բայի խոնարհումը
- Գ. Ժխտականը

VERBUM ԲԱՅ

Հին հունարենում բայն ունի՝

թիվ - numerus՝ եզակի - singularis, հոգնակի - pluralis, զույգ - dualis,

երեք դեմք - persona prima, secunda, tertia,

եղանակ - modus եւ

սեռ - genus:

Բայն ունի հետեւյալ ժամանակները՝ ներկա - Praesens, շարունակական անցյալ - Imperfectum, ապառնի - Futurum, անցյալ կատարյալ - Aorist, վաղակատար ներկա - Perfectum, վաղակատար անցյալ - Plusquamperfectum:

Հին հունարենում բայն ունի հետեւյալ եղանակները՝ սահմանական - Indicativum, հրամայական - Imperativum, պայմանական - Coniunctivum, ըղձական - Optativum եւ անորոշ - Infinitivum:

Բայն ունի երեք սեռ՝ ներգործական - Activum, կրավորական - Passivum եւ չեզոք - Medium:

PRAESENS INDICATIVI ACTIVI

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՆԵՐԿԱ

Հունարենի սահմանական ներկան համապատասխանում է հայերենի նույն ժամանակին եւ արտահայտում է ներկայում ընթացող, կրկնվող կամ շարունակվող գործողություն: Բառարաններում բայը ներկայացվում է Սահմանական ներգործական (կամ չեզոք) ներկայի եզակի թվի առաջին դեմքով, իսկ թարգմանությունը՝ անորոշ դերբայով:

βάλλω	նետել (նետում եմ)
βαπτίζω	մկրտել (մկրտում եմ)

Հունարենում ի տարբերություն անգլերենի կամ ֆրանսերենի դիմային վերջավորությամբ բայերի հետ սովորաբար դերանուն չի դրվում, նույն այնպես ինչպես հայերենում կամ ռուսերենում:

γράφει (նա) գրում է, այս պահին է գրում կամ շարունակում է գրել:
πέμπουμεν (մենք) ուղարկում ենք, կամ շարունակում ենք ուղարկել:

Հունարենի բայի Ներկա ժամանակի դիմային վերջավորությունները հարկավոր է շատ լավ սերտել, որովհետև դրանք որոշ փոփոխություններով կրկնվելու է նաև հունարենի այլ ժամանակաձևերում:

Հունարենի ներկան կազմելու համար բայի հիմքին ավելացնում ենք հետևյալ վերջավորությունները՝

	Sing.	Plur.
1.	- ω	- ομεν
2.	- εις	- ετε
3.	- ει	- ουσι (ν)

Ներկա ժամանակի անորոշ ներգործական դերբայի վերջավորությունն է - ειν γράφειν գրել, ἄρχειν սկսել, ἰζητεլ, τρέπειν շրջել:

Խոնարհենք լύω ազատել, արձակել բայը՝

	Sing.		Plur.	
1.	λύω	ազատում եմ	λύομεν	ազատում ենք
2.	λύεις	ազատում ես	λύετε	ազատում եք
3.	λύει	ազատում է	λύουσι (ν)	ազատում են

Ա. Հոգնակի 3-րդ դեմքի փակագծում նշված (ν), որը կոչվում է *շարժական* - ν դրվում է ι - ից, կամ ε - ից հետո, եթե նրան հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, կամ, եթե այդ բառին հաջորդում է որեւէ կետադրական նշան: Շարժական ν - ն օգտագործվում է հունարեն որոշ բայաձևերում եւս, որոնց կանդրադառնանք հետագայում: Այստեղ նշենք միայն, որ Նոր Կտակարանում այն երբեմն չի գրվում: Բ. Հունարենի ներկա ժամանակի կազմությունը համեմատելի է գրաբարի կազմության հետ, ինչը նպաստում է նրա ավելի դյուրին յուրացմանը:

	Sing.		Plur.	
1.	λύω	ազատեմ (ազատում եմ)	λύομεν	ազատենք
2.	λύεις	ազատես	λύετε	ազատեք
3.	λύει	ազատէ	λύουσι (ν)	ազատեն

գ. Հունարենի բայերի եւ *լինել* բայի երկրորդ դեմքի եզակին օգտագործվում է միայն մեկ անձի գործողությունը բնութագրելու դեպքում, իսկ երկրորդ դեմքի

հոգնակին մեկից ավելի անձանց գործողությունների նկարագրության ժամանակ, ի տարբերություն արդի հայերենի, ռուսերենի կամ անգլերենի:

Բառարան

ἀγιάζω	սրբացնել. նվիրաբերել	θύω	զոհաբերել
ἄγω	առաջնորդել, գործել, անել	κράζω	բղավել
ἀκούω	լսել	κελεύω	հրամայել
		κηρύσσω	քարոզել
ἀναγινώσκω	ճանաչել, կարդալ	λέγω	խոսել
βάλλω	նետել	λαμβάνω	վերցնել, ընկալել.
βαδίζω	քայլել, գալ	λείπω	թողնել
βαπτίζω	մկրտել	μανθάνω	սովորել
γινώσκω	ճանաչել, իմանալ	πέμπω	ուղարկել
γράφω	գրել	πίνω	ըմպել
δειγματίζω	խայտառակել	πιστεύω	հավատալ
διδάσκω	ուսուցանել	πλέκω	հյուսել
ἐλπίζω	հույս ունենալ	σώζω	փրկել
ἐσθίω	ուտել	ταράσσω	զայրանալ
ἔχω	ունենալ	τρέχω	վազել
θαυμάζω	զարմանալ	φέρω	կրել, տանել, բերել
θέλω, ἔθελω	ցանկանալ	φαίνω	փայլել, լուսավորել
θεραπεύω	բժշկել		

εἶναι լինել բայի խոնարհումը

	Sing.		Plur.	
1.	εἶμι	եմ	ἐσμέν	ենք
2.	εἶ	ես	ἐστέ	եք
3.	ἐστί (ν)	է	εἰσὶ (ν)	են

Հունարենի εἶναι բայը կարող է ենթակայի կամ լրացումի մաս լինել: Եթե գոյականը հոդ ունի, ապա այն ենթական է: Եթե εἶναι բայը երկու գոյականների միջև է, ապա բային նախադաս գոյականը սովորաբար հոդ չունի եւ այն լրացում

է: Այսպէս Մարկոսի ավետարանից հետեւյալ նախադասութեան մեջ ենթական օ սίος –ն է (որդին), լրացումը՝ κύριός էστιν – (տէր է)

Մկ. Բ.28 ὥστε κύριός էστιν ὁ υἱός τοῦ ἀνθρώπου καὶ τοῦ σαββᾶτου

ապա ուրեմն տէր է որդի մարդոյ եւ շաբաթու:

Հովհ.Ա.19 καὶ αὐτὴ ἐστὶν ἡ μαρτυρία τοῦ Ἰωάννου

եւ այս է վկայութիւնն Յովհաննու:

Հովհ.Ա.1 καὶ θεὸς ἦν ὁ λόγος

եւ Աստուած էր բանն:

Հայտնի այս հաստատումն օ λόγος – բանն ենթակա է, իսկ θεὸς ἦν - Աստուած էր – լրացում:

Ժխտականը

Սահմանական եղանակում ժխտական մասնիկն է ու, թերթի շնչով ձայնավորից առաջ գործածվում է ու՛կ, իսկ թանձր շնչով ձայնավորից առաջ՝ ու՛չ մասնիկը: Ժխտականը դրվում է ժխտվող բանից առաջ:

οὐ βάλλουσιν	չեն նետում
οὐκ ἠκούετε	չէիք լսում
οὐχ ὀρίζομεν	չենք սահմանում

Վարժություններ

Ա. Թարգմանք, նշք բայերի դեմքը, թիվը

γινώσκετε, λύουσι, ἄγομεν, μαθαίνεις, θεραπεύει, βάλλετε, πίνουσιν, ἔχομεν, πιστεύεις:

Բ. Թարգմանք հայերէն

1.Ե՛ւ գրա՛փււ . 2.Օ՛ւ գընո՛սքա. 3.Սո՛ւ տրէ՛լիս? 4.՝Աւ՛ւ շ՛նչ մաընոսըն. 5 Ո՛ւն օ՛ւ լէգօմըն, ա՛լլա գրա՛փօմըն. 6. Սօ՛թըն ծաճընոսըն; 7.՝Էկե՛տըն ծաճընոսըն. 8. Կալօ՛ս գրա՛փօմըն. 9.՝Էթէլըն շո՛թըն; 10. Սոլլաճըն շնչընոսըն գրա՛փօմըն, ա՛լլա օ՛ւկ աընաընոսըն. 11. Կալօ՛ս աճօւնըն; 12. Կըն կրա՛ջըն; 13. Կըն աճըն; 14. Կըն շնչըն (շնչըն); 15. Սրէքըն սրա՛քըն. 16. Կըն մալլոն շոթըն, շոթըն թըն ընչըն; 17. Օ՛ւկ աճօւնըն, օ՛ւճըն լէլըն.

9. 1. Τίς ἐστίν; Φιλόσοφος ἐστίν. 2. Λέγουσι, ὅτι φιλόσοφος ἐστίν. 3. Ἀλήθεια ἐστίν. 4. Ἐγὼ ὁ νόμος εἰμί. 5. Σὺ τίς εἶ; 6. Ἐγὼ εἰμί ὁ ἄρτος τῆς ζωῆς.

Βυνηρωαὺ

εὔ	ɹaw
οὐ, οὐκ, οὐχ	nɹ, ɹt
ποῖ	n ɹp
ἀεί	uɹɹu
νῦν	awɹu
ἀλλά	ɹawɹ, uawɹu
πόθεν;	nɹuɹtɹɹɹ ɹ
ἐκεῖθεν	awɹuɹtɹɹɹɹ
καλῶς	ɹaw
κακῶς	ɹaw
πολλάκις	hawɹawɹ
τίς	n ɹ
τί	ɹ uɹ
ἐλληνίστι	hnuɹawɹtɹ
πρέπει	awɹuɹɹ t, awɹhɹawɹtɹɹ t
οὔποτε	tɹɹtɹɹ
ὅτι	ɹuɹ, nɹ, nɹnɹɹɹtɹtɹtɹ
μᾶλλον	awɹtɹɹɹ ɹaw
ἢ	ɹt, haw
οὔδε	nɹ, nɹ tɹ
ἐγώ	tɹ
σύ	ɹnɹ
ἢ ἀλήθεια	ɹɹuɹawɹuɹɹɹɹuɹ
ὁ νόμος	oɹtɹɹ

ԴԱՍ 4

Ա. - εω վերջավորությանը բայեր

VERBUM εω

εω

ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՅԵՐ

Հին հունարենում բազմաթիվ բայերի հիմքը վերջանում է - ε ձայնավորով եւ բայի դիմային վերջավորությունները փոխվում են հետեւյալ կերպ՝

ε + ε	= ει
ε + ο	= ου
ε + ου	= ου
ε + ει	= ει
ε + ω	= ω

Ըստ այդմ փιλέω սիրել բայը Praesens Indicativi Activi - նւմ խոնարհվում է հետեւյալ կերպ՝

	Sing.			Plur.		
1.	φιλέω	φιλῶ	սիրում եմ	φιλόομεν	φιλοῦμεν	սիրում ենք
2.	φιλείεις	φιλεῖς	սիրում ես	φιλέετε	φιλεῖτε	սիրում եք
3.	φιλέει	φιλεῖ	սիրում է	φιλέουσι(ν)	φιλοῦσι(ν)	սիրում են

εω վերջավորությանը բայերը հունարեն բառարաններում սովորաբար ներկայացվում են եզակի թվի առաջին դեմքի ոչ թե կրճատ, այլ ամբողջական տեսքով փιλέω, αἰτέω, սակայն ՆԿ-ում այդ բայերը հանդիպում են կրճատ ձևերով λαλῶ, φιλῶ:

Մատթ. ԺԳ. 13 διαϰ τουϰτο έν παραβολαιϰς αϰτοιϰς λαλωϰ

Վասն այնորիկ առակաւք խաւսիւմ ընդ նոսա:

ՆԿ-ում առավել հաճախ գործածված εω վերջավորությանը բայեր

ἀθετέω	մերժել, հրաժարել	μαρτυρέω	վկայել, պնդել, հայտարարել, ընդունել, pass. լավ համբավ ունենալ
αἰτέω	խնդրել, պահանջել, հայցել	μετανοέω	սպաշխարել

ἀκολουθέω	հետեւել	μισέω	ատել
ἀπειθέω	չենթարկվել, չհնազանդվել	νοέω	գիտակցել, հասկանալ
ἀσθενέω	տկար, հիվանդ լինել	οἰκοδομέω	կառուցել
βλασφημέω	չարախոսել, պղծել	ὁμολογέω	համաձայնել, խոստովանել, խոստանալ
γαμέω	ամուսնանալ	παρακαλέω	խնդրել, աղերսել
δοκέω	կարծիք հայտնել, ենթադրել, կշիռ ունենալ, որոշել	πειθέω	ողբալ, լալ
δουλεύω	ենթարկել, ստրկացնել	περιπατέω	շրջել, քայլել, գտնվել արարել, գործել
δωρέω	նվիրաբերել, նվիրել	ποιέω	արարել, ստեղծել. իրագործել
ἐλεέω	կարեկցել, ողորմալ	ποιμανέω	հովվել
ἐξομολογέω	խոստովանել	προσκαρτερέω	պատրաստել
εὐλογέω	բարեխոսել, փառաբանել, օրհնել	προσκυνέω	երկրպագել, խոնարհվել
δουλέω	ստրուկ լինել, ծառայել	σωφρονέω	խոհեմ լինել
θεωρέω	տեսնել, դիտարկել, դատել	τηρέω	պահպանել, պաշտպանել, պահել
ζητέω	փնտրել, որոնել, ձգտել	ὑμνέω	երգել, հայտարարել
καλέω	կանչել, կոչել, անվանել	ὑστερέω	պակասել
κατοικέω	բնակվել, ապրել, բնակեցնել	φιλέω	սիրել
κατηγορέω	առարկել, մեղադրել	φορέω	տանել, կրել
κινέω	շարժել, հետապնդել, տիպել		
κληρονομέω	ժառանգել	φωνέω	ձայն տալ, կանչել, գոչել, երգել, անվանել

κρατέω	լինել գորեղ, իշխել, հետեւել, պահպանել	χωρέω	սեղադրել, ներս թողնել, գնալ, ուղեւորվել
λαλέω	խոսել	ώφελέω	օգնել, օգուտ տալ

Վարժություններ

Ա. Թարգմանք, նշք բայերի թիվը, դեմքը

Λαλούμεν αίτις, τηρούσιν, ποιείτε, μετανοεῖ, μαρτυροῦσιν, ζητείτε, καλῶ,
θεωροῦμεν, τηρεῖς, διακονεῖτε, δουλεῖς, μισῶ, βλασφημεῖ, εὐλογοῦσιν, φιλοῦμεν,

Բ. Փոխեք բերված բայաձևերի թիվը՝ օրինակ՝ μαρτυροῦμεν - μαρτυρέω

ԴԱՍ 5

Ա.Գոյական անուն

Բ. Երկրորդ հոլովում

Գ. Հոլովների հիմնական գործառույթները

NOMEN SUBSTANTIVUM

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Հին հունարենում գոյականն ունի **սեռ, թիվ, հոլով եւ հոլովում**: Գոյականն ունի **երեք թիվ**` (numerus) եզակի (singularis), հոգնակի (pluralis), եւ զույգ (dualis): Գոյականներն ունեն **երեք սեռ**` (genus) արական (masculinum), իգական (femininum) եւ չեզոք (neutrum), **երեք հոլովում**` (declinatio), առաջին (prima), երկրորդ (secunda), երրորդ (tertia) եւ **հինգ հոլով** (casus)` ուղղական (Nominativus), սեռական (Genetivus), տրական (Dativus), հայցական (Accusativus), եւ կոչական (Vocativus):

Հին հունարենն ունի որոշակի հոդեր, որոնք դրվում են գոյականին կից եւ ցույց են տալիս գոյականի սեռը: Համեմատենք գերմաներենի հետ, որն ունի սեռային հատկանիշներ եւ հոդերի հոլովման համակարգ` արական, իգական, չեզոք` Der, Die, Das: Ռուսերենի հետ հունարենը համեմատելի է միայն սեռային հատկանիշներով, քանի որ ռուսերենը չունի հոդեր: Օրինակ комната - իգական, стол - արական, окно- չեզոք սեռի գոյականներ են: Հունարենի հոդերն են **ὁ** արական, **ἡ** իգական եւ **το** չեզոք: Հոդերը հոլովվում են հետեւյալ կերպ`

Sing.	masc.	femin.	neutr.
Nom.	ὁ	ἡ	τὸ
Gen.	τοῦ	τῆς	τοῦ
Dat.	τῷ	τῇ	τῷ
Acc.	τὸν	τήν	τὸ
Voc.	ὦ	ὦ	ὦ

Plur.	masc.	femin.	neutr.
Nom.	οἱ	αἱ	τὰ
Gen.	τῶν	τῶν	τῶν
Dat.	τοῖς	ταῖς	τοῖς
Acc.	τούς	τάς	τὰ
Voc.	ὦ	ὦ	ὦ

Նշենք, որ հունարենում կոչական հոլովի ὦ - ն ոչ թե հոդ է, այլ բացականչության նշան, ինչպես որ հայերենում է եւ ՆԿ-ում այն գրեթե չի գործածվում: Նշենք նաեւ, որ արական, իգական եւ չեզոք սեռի հոդերը եզակի տրականում ստանում են այսպես կոչված *jota subscriptum* (յոտա սուբսկրիպտում - ներքոգրյալ յոտա) ձայնավորը՝ τῶ, τῆ, որը չի արտասանվում, բայց պարտադիր դրվում է: Համեմատենք գրաբարի - արքայ բառի հետ: Բառարաններում գոյականները ներկայացված են եզակի թվի ուղղական հոլովով, հոդով եւ եզակի սեռականի վերջավորությամբ՝ ὁ ἄνθρωπος, οὐ. ἡ ὥρα, ας. τὸ δῶρον, οὐ:

DECLINATIO II

ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

Հին հունարենի, ինչպես նշեցինք ունի երեք հոլովում: Հոլովական համակարգի ուսութանասիրությունը սովորաբար սկսում են Երկրորդ հոլովումից այն համարելով յուրացնելու համար ավելի դյուրին:

Երկրորդ հոլովման են պատկանում արական սեռի գոյականներ, որոնք եզակի ուղղականում ունեն օς վերջավորություն՝ ἄνθρωπος մարդ, λόγος բառ, բան, οὐρανός երկինք, ἄρτος հաց եւ չեզոք սեռի գայականներ, որոնք եզակի ուղղականում ունեն օν վերջավորություն՝ δῶρον նվեր, ընծա, δένδρον ծառ, ἱερόν տաճար, πλοῖον նավակ:

Երկրորդ հոլովման են պատկանում նաև մի խումբ իգական սեռի գոյականներ, որոնք եզակի ուղղականում ունեն օς վերջավորություն՝ παρθένος կույս, βίβλος գիրք, ὁδός ճանապարհ:

Ա. Երկրորդ հոլովման գոյականների հոլովման համար բառի հիմքին ավելացնում ենք համապատասխան վերջավորությունները: Գոյականների եզակի սեռականի առանց վերջավորության ձևը համարվում է գոյականի հիմք:

Բ. Երկրորդ հոլովման արական, իգական եւ չեզոք սեռի գոյականները եզակի սեռական հոլովում ունեն օս վերջավորություն, հոգնակի սեռականում՝ ων:

Գ. Երկրորդ հոլովման արական եւ իգական սեռի գոյականները եզակի կոչական հոլովում ունեն ε վերջավորությունը՝ համեմատենք ռուսերենի կոչական հոլովի հետ՝ Бог-Боже, Отец-Отче:

Երկրորդ հոլովման արական եւ իգական սեռի գոյականներն ունեն հետևյալ վերջավորությունները՝

Sing.		Plur.
Nom.	- օς	- օι
Gen.	- օս	- օν
Dat.	- օ	- օις
Acc.	- օν	- օսς
Voc.	- ε	- օι

Երկրորդ հոլովման արական սեռի գոյականներ

ὁ ἄνθρωπος մարդ

Sing.				Plur.		
Nom.	ὁ	ἄνθρωπος	մարդ(ը)	οἱ	ἄνθρωποι	մարդիկ
Gen.	τοῦ	ἀνθρώπου	մարդու(ց)	τῶν	ἀνθρώπων	մարդկանց
Dat.	τῷ	ἀνθρώπῳ	մարդուն, մարդու համար	τοῖς	ἀνθρώποις	մարդկանց

			մարդուն			
Acc.	τὸν	ἄνθρωπον	մարդը	τούς	ἀνθρώπους	մարդկանց
Voc.	ὦ	ἄνθρωπε	օ, մարդ	ὦ	ἄνθρωποι	մարդիկ

’Ιησοῦς անվան հոլովումը

Որոշ վերապահումով երկրորդ հոլովման է պատկանում նաև ’Ιησοῦς անունը:

Nom.	’Ιησοῦς
Gen.,Dat.ΠVΠc.	’Ιησοῦ
Acc.	’Ιησοῦν

N.B. ՆԿ-ի որոշ անձնանուններ պատկանում են երկրորդ հոլովման՝ Φίλιππος, Πέτρος, Νικόδημος, Ματθαῖος, Μᾶρκος, սակայն անձնանունների մեծ մասը չի հոլովվում. դրանց հոլովը պայմանավորված է հոդով կամ նախդիրով օրինակ՝ ἀπὸ Ναζαρέτ - Նազարեթից, τὸν Ναθαναήλ - Նաթանայելին, ἐν Κανὰ - Կանայում, εἰς Καφαρναοὺμ - ի Կափառնասում, τὴν Κανὰ - Կանա:

ՆԿ-ում առավել հաճախ գործածված երկրորդ հոլովման արական սեռի գոյականներ

ὁ ἄγγελος	հրեշտակ, լրաբեր	ὁ Κύριος	Տեր
ὁ ἄγρος	դաշտ	ὁ οἶκος	տուն
ὁ ἀδελφός	եղբայր	ὁ λαός	ժողովուրդ,ամբոխ
ὁ ἁμαρτωλός	մեղավոր	ὁ λέπρος	բորոտավոր
ὁ ἄνεμος	քամի	ὁ λίθος	քար
ὁ ἄνθρωπος	մարդ	ὁ λόγος	բառ, բան, խոսք
ὁ ἀπόστολος	առաքյալ		
ὁ ἄρτος	հաց	ὁ μίσθος	վարձք, պարգև
ὁ ἀρχιτρίκλινος	սեղանապետ	ὁ ναός	տաճար
ὁ γαμός	ամուսնություն,	ὁ νόμος	օրենք

	հարսանիք		
ὁ δῆμος	ժողովուրդ	ὁ նυμφίος	փեսա
ὁ διάβολος	չար ոգի, սատանա	ὁ οἶνος	գինի
ὁ διάκονος	սպասավոր, արկավագ	ὁ ὀφθαλμός	աչք
ὁ διδασκάλος	ուսուցիչ, վարդապետ	ὁ ὄχλος	ամբոխ
ὁ δοῦλος	ստրուկ, ծառա	ὁ παραλυτικός	անդամալույծ
ὁ ἔχθρος	թշնամի	ὁ πειρασμός	փորձություն
ὁ Θεός	Աստված	ὁ οὐρανός	երկինք
ὁ θάνατος	մահ	ὁ πρεσβύτερος	ճերմունի, ավագ
ὁ θρόνος	աթոռ, գահ	ὁ ποταμός	գետ
ὁ ἥλιος	արեւ	ὁ σταύρος	խաչ, փայտ
ὁ ἵππος	ձի	ὁ τόπος	տեղ, վայր
Ἰησοῦς	Հիսուս	ὁ υἱός	որդի, արու զավակ
Ἰάκωβος	Հակոբոս	ὁ φίλος	բարեկամ, ընկեր
ὁ καιρός	ժամանակ	ὁ φόβος	վախ, երկյուղ
ὁ καρπός	պտուղ	ὁ χαλκός	պղինձ, ցնձա
ὁ κόσμος	աշխարհ, տիեզերք	ὁ χρόνος	ժամանակ

Երկրորդ հոլովման իգական սեռի գոյականներ

Երկրորդ հոլովման իգական սեռի գոյականները հոլովվում են երկրորդ հոլովման արական սեռի գոյականների պես՝ տարբերվելով իգական սեռի հոդերով:

ή βίβλος գիրք

Sing.			Plur.	
Nom.	ἡ	βίβλος	αἱ	βίβλοι
Gen.	τῆς	βίβλου	τῶν	βίβλων
Dat.	τῇ	βίβλῳ	ταῖς	βίβλοισ
Acc.	τήν	βίβλον	τάς	βίβλους
Voc.	ὦ	βίβλε	ὦ	βίβλοι

ՆԿ-ում առավել հաճախ գործածված երկրորդ հոլովման իզական սեռի գոյականներ

ἡ ἄμπελος	խաղող, խաղողի վազ, որթատունկ
ἡ βίβλος	գիրք
ἡ διάκονος	սպասուհի
ἡ διαλέκτος	բարբառ
ἡ ἔρημος	անապատ
ἡ νῆσος	կղզի
ἡ νόσος	հիվանդություն
ἡ ὁδός	ճանապարհ
ἡ παρθένος	կույս, օրհորդ
ἡ περιχώρος	շրջակայք
ἡ τρίβος	շավիղ

Երկրորդ հոլովման չեզոք սեռի գոյականներ

Ա. Չեզոք սեռի գոյականները ուղական, հայցական եւ կոչական հոլովներում ունեն նույն վերջավորությունները:

Բ. Չեզոք սեռի գոյականները հոգնակի թվի ուղական, հայցական եւ կոչական հոլովներում ունեն *α* վերջավորությունը:

Գ. Չեզոք սեռի գոյականները սեռական եւ տրական հոլովներում եզակի եւ հոգնակի թվում հոլովվում են արական սեռի գոյականների պես:

τὸ δένδρον **δων**

	Sing.		Plur.	
Nom.	τὸ	δένδρον	τὰ	δένδρα
Gen.	τοῦ	δένδρου	τῶν	δένδρων
Dat.	τῷ	δένδρῳ	τοῖς	δένδροις
Acc.	τὸ	δένδρον	τὰ	δένδρα
Voc.	ὦ	δένδρον	ὦ	δένδρα

ՆԿ-ում առավել հաճախ գործածված երկրորդ հոլովման չեզոք սեռի գոյականներ

τὸ ἀργύριον	արծաթ, դրամ	τὸ μέτρον	չափ
τὸ βιβλίον	գիրք	τὸ μνημεῖον	գերեզման
τὸ δαιμόνιον	չար ոգի, սատանա	τὸ μυστήριον	գաղտնիք
τὸ δένδρον	δων	τὸ μύρον	մյուռոն
τὸ δεῖπνον	ընթրիք	τὸ παιδίον	մանուկ
τὸ δίκτυον	ուռկան, ցանց	τὸ πλοῖον	նավակ
τὸ δῶρον	ընծա, նվեր	τὸ ποτήριον	գավաթ
τὸ ἔλαιον	յուղ. ձիթայուղ	τὸ πρόσωπον	երես, դեմք

τὸ ἔργον	գործ	τὸ πτερύγιον	գագաթ
τὸ εὐαγγέλιον	բարի լուր, ավետարան	τὸ σάββατον	շաբաթ
τὸ θηρίον	գագան	τὸ σημεῖον	նշան, հրաշք
τὸ θυσιαστήριον	գոհասեղան	τὸ συνέδριον	սինեդրիոն, խորհուրդ
τὸ ἱερόν	տաճար	τὸ τέκνον	մանուկ
τὸ ἱμάτιον	հագուստ, թիկնոց	τὸ χρυσίον	ոսկի, ոսկեդրամ
τὸ λύτρον	փրկագին	τὸ χωρίον	Ագարակ

Հոլովների հիմնական գործառույթները

Ա. Ուղղական հոլովը պատասխանում է *ով, ինչ* հարցերին: Անկախ նախադասությունում գրաված դիրքից ենթական միշտ դրվում է ուղղական հոլովով:

Մատթ. 2.21 *ὅπου γὰρ ἐστὶν ὁ θησαυρός σου*

Ջի ուր գանձք ձեր են

Մատթ. 2.22 *ὁ λύχνος τοῦ σώματός ἐστὶν ὁ ὀφθαλμός*

Ճրագ մարմնոյ ակն

Բ. Սեռական հոլովը պատասխանում է *ուի, ինչի* հարցերին եւ ցույց է տալիս պատկանելիություն: Որոշ կապերով սեռական հոլովը համապատասխանում է հայերենի բացառական հոլովին:

Մարկ. Ա.1 *ἀρχὴ τοῦ εὐαγγελίου Ἰησοῦ Χριστοῦ υἱοῦ θεοῦ*

Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի որդւոյ Աստուծոյ

Մարկ. Ա.11 *καὶ φωνὴ ἐγένετο ἐκ τῶν οὐρανῶν*

Ձա՞յն եղեւ յերկնից

Գ. Տրական հոլովը պատասխանում է *ուի, ինչի, ում համար, ինչի համար, ումով, ինչով* հարցերին: Տրական հոլովով է դրվում նախադասության լրացումը, տարբեր կապերով տրական հոլովը համապատասխանում է հայերենի գործիական, ներգոյական հոլովներին, ինչին կանդրադարձաբ հետագայում:

Մատթ. 2.14 *ἐὰν γὰρ ἀφῆτε τοῖς ἀνθρώποις*

Ջի եթէ թողուցուք մարդկան

Մատթ. Է.3 *ἐν τῷ σῶ ὀφθαλμῷ δοκὸν οὐ κατανοεῖς*

Էլ ի քում աղան զգերանդ ո՞չ նշմարես

Դ. Հայցական հոլովը պատասխանում է *ում*, *ինչին* հարցերին Էլ նախադասության մեջ լինում է ուղիղ խնդիր:

Մատթ. 2.24 *ἀφες ἑκεί τὸ δῶρόν σου*

թող զպատարագն քո

Յովհ. 1.18 *θεὸν οὐδείς ἑώρακεν πώποτε*

ՁԱստուած ոչ ոք ետես երբեք

Ե. Կոչական հոլովը գործածվում է անձին, առարկային ուղիղ դիմելու դեպքում:

Կոչական հոլովի *օ* բացականչական նշանը կարող է դրվել կամ սղվել: Հունարենի գոյականների մեծ մասի ուղղական Էլ կոչական հոլովների վերջավորությունները համընկնում են, այդ իսկ պատճառով դասագրքերում ուղղական Էլ կոչական հոլովները հաճախ իրար հետ են նշվում: Եթե ուղղական Էլ կոչական հոլովների ձևերը տարբերվում են, պարտադիր նշվում է սլյալ գոյականի կոչականի վերջավորությունը կամ ձևը:

Մարկ. Թ.19 *ὦ γενεὰ ἄπιστος*

Ո՞վ ազգ անհաւատ

Հունարեն *օ* յեռնն եզակի կոչականը եզակի ուղղականում ունի նույն ձևը - յեռնն :

Յովհ. Բ.4 *καὶ λέγει αὐτῇ ὁ Ἰησοῦς τί ἐμοὶ καὶ σοί γύναι*

Զի՞ կայ իմ ել քո կին

Հունարեն *յունն* կին եզակի կոչականը եզակի ուղղականում ունի *յունն* ձևը:

Վարժություններ

Ա. Թարգմանք հայերեն, որոշեք գոյականների թիվը, սեռը, հոլովը:

ὁδὸν κυρίου, βλέπει τὸν Ἰησοῦν, ὁ ἀμνὸς τοῦ θεοῦ, τοῦ κόσμου, διδάσκαλε, ποῦ μένεις; εὗρίσκει Φίλιππος τὸν Ναθαναήλ, τοὺς ἀγγέλους τοῦ θεοῦ, τέκνα θεοῦ, φωνεῖ τὸν νυμφίον ὁ ἀρχιτρίκλινος, τὰ ἔργα τοῦ θεοῦ.

Բ. Տեղադրեք հոդերը, նշեք գոյականների եզակի ուղղականի ձևերը, թարգմանեք հայերեն՝ օրինակ *άρτον* - *τὸν ἄρτον*, *ὁ ἄρτος* հաց:

... ἄνθρωποι, ...κόσμος, ...γάμον, ...σημεῖα, ...κύριε, ...σάββατον, ...λόγω, ... μνημείοις, ...ἀνθρώπων, ... πλοίου, ...ἀγγέλους.

ԴԱՍ 6

Ա. Առաջին հոլովում. իգական սեռի գոյականներ

a purum, a impurum, η

Բ. Արական սեռի գոյականներ

Գ. Նախադասության մեջ բառերի դասավորությունը

DECLINATIO I

ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Առաջին հոլովման են պատկանում իգական սեռի գոյականներ, որոնք եզակի ուղղականում ունեն - *a*, - *η* վերջավորությունները՝

<i>ἀγορά</i>	հրապարակ
<i>σοφία</i>	իմաստություն
<i>δόξα</i>	փառք
<i>νίκη</i>	հաղթանակ
<i>ἀρχή</i>	սկիզբ

Եւ մի խումբ արական սեռի գոյականներ, որոնք եզակի ուղղականում ունեն -*ας*, -*ης* վերջավորությունները՝

νεανίας

երիտասարդ

πολίτης

քաղաքացի:

- *η* վերջավորություն ունեցող գոյականները պահպանում են - *η* ձայնավորը եզակի թվի բոլոր հոլովներում:

- *a* վերջավորություն ունեցող գոյականները պահպանում են *a*- ն եզակի թվի բոլոր հոլովներում այն դեպքում, եթե եզակի ուղղականում *a*- ին նախորդում են - *ε*, - *ι*, - *ρ* տառերը: Այս գոյականների *a*- ն կոչվում է «մաքուր» (*purum*)՝ *ή χώρα* երկիր, հող,

ή ἀλήθεια ճշմարտություն, *ή γενεά* սերունդ: Առաջին հոլովման բոլոր գոյականների շեշտը հոգնակի սեռականում դրվում է վերջին վանկի վրա, եւ այն միշտ երկար է:

Առաջին հոլովմանը պատկանող գոյականները հոգնակի թվի բոլոր հոլովներում պահմանում են *a* – ն:

Առաջին հոլովման իգական սեռի գոյականներ

η եւ *a purum*

ή γραφή գիր, *ή σοφία* իմաստություն

Sing.				Plur.		
Nom. Voc.	ή	γραφή	σοφία	αί	γραφαί	σοφίαι
Gen.	τῆς	γραφῆς	σοφίας	τῶν	γραφῶν	σοφῶν
Dat.	τῇ	γραφῇ	σοφίᾳ	ταῖς	γραφαῖς	σοφίαις
Acc.	τήν	γραφήν	σοφίαν	τάς	γραφάς	σοφίας

N.B. Այս խմբին պատկանող գոյականների թվում կան մի քանի բացառություններ, այսպես ἡ σπεῖρα գունη, **Gen.** σπείρης (ոչ ρε σπείρας), ἡ μάχαιρα սուր, **Gen.** μαχίρης (ոչ ρε μαχίρας):

Եթե առաջին հոլովման գոյականների շեշտը վերջին վանկի վրա է՝ ἡ ἀγάπη, ἡ διδαχή, ἡ ἀρχή ապա եզակի եւ հոգնակի սեռական եւ տրական հոլովներում այն միշտ երկար է՝ տես ἡ γραφή բառի հոլովումը:

α impurum

Առաջին հոլովման -α վերջավորությամբ այն գոյականները, որոնք հիմքում չունեն ι, ε, ρ տառերը կոչվում են α «ոչ մաքուր» (impurum)՝ ἡ τραπέζα սեղան, ἡ τράπεζα խնամք, հոգս, ἡ δόξα փառք: Այս խմբի գոյականների -α ն պահպանվում է ուղղական, հայցական եւ կոչական հոլովներում, իսկ եզակի սեռական եւ տրական հոլովներում -α -ն փոխվում է -h-ի:

ἡ δόξα փառք

Sing.			Plur.	
Nom. Voc.	ή	δόξα	αί	δόξαι
Gen.	τῆς	δόξης	τῶν	δοξῶν
Dat.	τῇ	δόξῃ	ταῖς	δόξαις
Acc.	τήν	δόξαν	τάς	δόξας

Բացառություն է կազմում Μάρθα անունը, որի եզակի սեռականն է Μάρθας (ոչ ρε Μάρθης):

Առաջին հոլովման արական սեռի գոյականներ

Առաջին հոլովման արական սեռի գոյականները հոլովվում են իգական սեռի գոյականների պես բացառությամբ եզակի սեռականի, երբ նրանք ստանում են -ου վերջավորությունը՝

ὁ νεανίας - τοῦ νεαίου
ὁ πολίτης - τοῦ πολίτου

Առաջին հոլովման արական սեռի գոյականները անկախ եզակի ուղղականում՝ -
 աս, -ης նրանց վերջավորություններից եզակի կոչականում ստանում են *a*
 վերջավորությունը՝ **Nom.** *ὁ νεανίας* - **Voc.** *νεανία*, **Nom.** *ὁ πολίτης* - **Voc.** *πολίτα*:

ὁ πολίτης քաղաքացի, *ὁ νεανίας* երիտասարդ

Sing.				Plur.		
Nom.	ὁ	<i>νεανίας</i>	<i>πολίτης</i>	οἱ	<i>πολίται</i>	<i>νεανίαί</i>
Gen.	τοῦ	<i>νεανίου</i>	<i>πολίτου</i>	τῶν	<i>πολιτῶν</i>	<i>νεανιῶν</i>
Dat.	τῷ	<i>νεανία</i>	<i>πολίτη</i>	τοῖς	<i>πολίταις</i>	<i>νεανίαις</i>
Acc.	τὸν	<i>νεανίαν</i>	<i>πολίτην</i>	τούς	<i>πολίτας</i>	<i>νεανίας</i>
Voc.	ὦ	<i>νεανία</i>	<i>πολίτα</i>	ὦ	<i>πολίται</i>	<i>νεανίαί</i>

N.B. ՆԿ-ում *ὁ νεανίας* բառից բացի երկրորդ հոլովման արական սեռի - *ας*
 վերջավորությամբ այլ գոյականներ չկան: *ὁ νεανίας* գոյականի պես են հոլովվում
 'Ανδρέας, Μεσσίας անձնական անունները:

ՆԿ-ում առավել հաճախ գործածված առաջին հոլովման իգական սեռի
 գոյականներ

η վերջավորությամբ գոյականներ	<i>a purum</i> վերջավորությամբ գոյականներ

ή <i>ἀγάπη</i>	սեր	ή <i>ἀγγελία</i>	լուր, հանձնարարական
ή <i>ἀδελφή</i>	քույր	ή <i>ἄγκυρα</i>	խարիսխ
ή <i>ἀκοή</i>	լուր, համբավ	ή <i>ἀγορά</i>	հրապարակ
ή <i>ἀνάγκη</i>	ճակատագիր	ή <i>ἀδικία</i>	անարդարություն
ή <i>ἀνατολή</i>	արեւելք	ή <i>αἰτία</i>	պատճառ, մեղադրանք
ή <i>ἀξίνη</i>	կացին	ή <i>ἀκαθαρτία</i>	անմաքրություն, արատավորություն
ή <i>ἀπογραφή</i>	ցուցակ, ցանկ	ή <i>ἀκρίβεια</i>	հստակություն, պակասություն
ή <i>ἀποστολή</i>	առաքելություն	ή <i>ἀλήθεια</i>	ճշմարտություն
ή <i>ἀπωλεΐα</i>	կործանում	ή <i>ἀμαρτία</i>	մեղք
ή <i>ἀρχή</i>	սկիզբ. իշխանություն	ή <i>ἀναλογία</i>	համաչափություն
ή <i>ἀστραπή</i>	կայծակ, փայլ, լույս	ή <i>ἀνδρεία</i>	խիզախություն

ή βοτανή	խոտ	ή άνοια	սգիտություն, հիմարություն
ή βροντή	ամպրոպ	ή άνομία	անօրինություն
ή γη (γέα)	երկիր, հող	ή άπείθεια	անհնազանդություն
ή γνωμή	կարծիք, տեսակետ	ή άπολογία	պաշտպանություն, պատասխան.
ή γραφή	գիր	ή άποτομία	խստություն
ή διδαχή	ուսմունք, վարդապետություն	ή άπουσία	բացակայություն
ή διαθηκή	կտակ, կտակարան	ή άσιτία	ծնապահություն, սով
ή δική	պատիժ, արդարություն	ή άτιμία	անարգանք, առհամարհանք.
ή δόκιμη	փորձություն, ստուգում	ή βασιλεία	արքայություն
ή δουλή	ստրկուհի	ή γενεά	սերունդ, ազգ
ή έπιστολή	նամակ	ή γερουσία	ծերակույտ
ή ειρήνη	խաղաղություն	ή γέφυρα	կամուրջ
ή έλεημοσύνη	կարեկցանք	ή γωνία	անկյուն
ή έντολή	պատվիրան	ή δειλία	վախկոտություն
ή έορτή	սոն	ή διακονία	ծառայություն
ή ζώή	կյանք	ή διασπορά	սփռում
ή ζωνή	զոտի	ή διαφθορά	ոչնչացում, կործանում
ή ήδονή	հաճույք. կիրք	ή διδασκαλία	դասավանդում, ուսուցանում.
ή κεφαλή	գլուխ, սկզբ	ή δουλεία	ստրկություն,ծառայություն.
ή κλινή	մահճակալ	ή έκκλησία	եկեղեցի, ժողով
ή λογχή	նիզակ	ή έξουσία	Իշխանություն, իրավունք
ή μαχή	մարտ, ճակատամարտ	ή δωρεά	ընծա, կտակ
ή νεφέλη	ամպ	ή ήλικία	տարիք, սերունդ
ή νυμφή	հարս, ջրահարս	ή ήσυχία	լռություն, խաղաղություն
ή όργή	ցասում, նզովք, բարկություն	ή ήμέρα	օր
ή παιδίσκη	աղջիկ	ή θύρα	դուռ
ή παραβολή	առակ	ή θυσία	զոհողություն, զոհաբերում.
ή παρακοή	անհնազանդություն	ή ιστορία	պատմություն
ή πηγή	աղբյուր	ή κακία	չարիք

ή προσευχή	աղոթք	ή καρδιά	սիրտ
ή σκηνή	վրան	ή κοινωνία	հաղորդություն
ή σπουδή	խնամք, ջանասիրություն	ή μαρτυρία	վկայություն, նահատակություն.
ή στολή	հագուստ	ή όπτασία	տեսք, տեսիլք
ή συκή	թզենի	ή όψία	երեկո
ή σχολή	դպրոց	ή πέτρα	քար, վեմ
ή συναγωγή	ժողովարան	ή πλατεία	ափ (ձեռքի), փողոց
ή τέχνη	արհեստ, արվեստ	ή σκοτία	խավար
ή τιμή	զին, պատիվ, հարգանք	ή στρατία	զորք
ή τροφή	կերակուր	ή στρατεία	մարտ, պատերազմ, ճակատամարտ
ή σιγή	լռություն	ή σωτερία	փրկություն
ή ύλη	փայտ, անտառ	ή ύδρία	դուլլ
ή φυλακή	պահակախումբ, բանտ	ή φιλία	սեր
ή φυλή	ցեղ, տոհմ	ή χάρα	ուրախություն
ή φωνή	ձայն	ή χώρα	երկիր, հող, բնակչություն
ή ψυχή	շունչ, հոգի, անձ, մարդ	ή ώρα	ժամ, ժամանակն

ՆԿ-ում առավել հաճախ գործածված առաջին հոլովման իգական սեռի *a*
impurum գոյականներ

γλῶττα	լեզու
δόξα	կարծիք, փառք
ή θάλασσα	ծով
ή μελίττα	մեղու
ή μέριμνα	խնամք, հոգս
ή μοῦσα	մուսա
ή τράπεζα	սեղան
ή ρίζα	արմատ

ՆԿ-ում առավել հաճախ գործածված առաջին հոլովման արական սեռի *as, ης*
վերջավորությամբ գոյականներ

Ἄνδρέας	Անդրեաս
ὁ βαπτιστής	մկրտիչ
ὁ δεσπότης	տեր
ὁ δικαστής	դատավոր
Ἰορδάνης	Հորդանան
Ἰωάννης	Հովհաննես
ὁ κλέπτης	գող
ὁ κριτής	դատավոր
ὁ ληστής	ավազակ
ὁ μαθητής	աշակերտ
ὁ νεανίας	երիտասարդ
ὁ Μεσσίας	Մեսիա
ὁ ὀφειλέτης	պարտապան
ὁ Ποιητής	Արարիչ
ὁ πολίτης	քաղաքացի
ὁ προφήτης	մարգարե
ὁ στρατιώτης	զինվոր, մարտիկ
ὁ τελώνης	մաքսավոր
ὁ ὑποκριτής	կեղծավոր
ὁ ψεύστης	խաբեբա

Նախադասության մեջ բառերի դասավորությունը

Հին հունարենում նախադասության մեջ բառերի դասավորությունն ազատ է: Բառերի փոփոխությունը կարող է հանգեցնել ոչ թե իմաստային, այլ տրամաբանական շեշտդրման փոփոխության: Այս իմաստով հունարենն նման է հայերենի եւ ռուսերենի:

Յովհ. Չ.48 ἔγώ εἰμι ὁ ἄρτος τῆς ζωῆς - Ե՞ս եմ հացն կենաց:

Փոխելով նախադասության մեջ բառերի դասավորությունը կարող ենք ստանալ հետևյալ պատկերը^a

ὁ ἄρτος τῆς ζωῆς ἔγώ εἰμι - հաց կենացն եմ ես:

ὁ τῆς ζωῆς ἄρτος ἔγώ εἰμι - կենաց հացն եմ ես:

Վարժություններ

Ա. Դուրս բերեք հունարեն բնագրին համապատասխան գրաբար համարժեքները եւ առաջին հիշվման գոյականները՝ օրինակ *ήγγικεν γαρ η βασιλεία των ουρανων, η βασιλεία - արքայություն:*

1. <i>έν τῇ σκοτίᾳ φαίνει</i>	Եւ իբրեւ մտին ի տուն
2. <i>έδωκεν αυτοῖς έξουσίαν</i>	Եւ անդ էր արբեր մի Յակովբայ
3. <i>ή τε θάλασσα άνέμου μεγάλου πνέοντος διεγείρετο</i>	ի ներքոյ թզենույն
4. <i>ού δύναται ιδεῖν τήν βασιλείαν του θεού</i>	Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր
5. <i>ήν δε εκεί πηγή του Ίακώβ</i>	Որ ընդունի զվկայութիւն
6. <i>ού δύναται εισελθειν εις τήν βασιλείαν του θεού</i>	Չայն բարբառոյ յանապատի
7. <i>ο άστηρ όν ειδον έν τῇ άνατολῇ</i>	Եւ խոստովան լինէին զմեղս իրեանց
8. <i>ού χρείαν ειχεν</i>	ն՝չ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ
9. <i>και έλθόντες εις τήν οίκίαν</i>	Եւ ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր
10. <i>ιδου μάγοι από άνατολών</i>	Ետ նոցա իշխանութիւն
11. <i>έξομολογούμενοι τας άμαρτίας αυτών</i>	զի ոչ էր պիտոյ
12. <i>τήν μαρτυρίαν έσφράγισεν</i>	Ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ
13. <i>φωνή βοωντος έν τῇ έρήμω</i>	ն՝չ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ
14. <i>υπό τήν συκῆν</i>	Եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս

Բ. Թարգմանեք բառակապակցությունները, նշեք գոյականների թիվը, հոլովը, սեռը, հիշվումը՝ օրինակ՝

τήν δόξαν του θεού - Աստծո փառքը:

τήν δόξαν - եզ. հայց. իգակ, 1- ին

του θεού - եզ. սեռ. արակ. 2- րդ

ο προφήτης εἶ σύ (դու)

ἴδε (ահա) ο άμνός του θεού

οί δύο (երկու) μαθηταί

υποκάτω (=υπο) τῆς συκῆς

Ἄνδρου καὶ Πέτρου

καὶ τῇ ἡμέρᾳ τῇ τρίτῃ (երրորդ)

τὰς ἀμαρτίας αὐτῶν (իրենց)

συνάγει καρπὸν

εἰς ζωὴν αἰώνιον (հավիտենական)

ἐν τῷ πλοίῳ

ἢ ἀκοὴ αὐτοῦ (նրա)

Գ. Թարգմանէք հունարէն

մկրտում է ժողովրդին, ի տուն, Հոկոբոսի աղբյուրը, խավարում լուսավորում է, վկայություն, ձայն քարքառո անապատում, տեսնում է արքայությունը, ծովի քամին, իշխանություն ունես, մոզեր արեւելքից, տեսնում են արեւելքում, ես եմ:

ԴԱՍ 7

Ա. Ածականների հոլովումը
 Բ. Ածականների գործառույթները

NOMEN ADJECTIVUM

ԱՇՄԿԱՆ ԱՆՈՒՆ (Առաջին եւ երկրորդ հոլովում)

Հին հունարենում ածական անունը հոլովվում է եւ համաձայնում է գոյականի հետ թվով, հոլովով եւ սեռով: Բառարանում այն ներկայացված է եզակի թվի ուղղական հոլովով. նախ գրվում է արական սեռի ածականը , այնուհետեւ իգական եւ չեզոք սեռի ածականի վերջավորությունները՝ ἅγιος, α, ον, ἀληθινός, ή, όν: Առաջին հոլովման են պատկանում **իգական սեռի** ածականները, որոնք **Nom. sing.** ունեն **-α, η** վերջավորությունը՝ ἅγια - սուրբ, ἀγαθή - բարի, լավ, երկրորդ հոլովման են պատկանում **արական սեռի** ածականները, որոնք **Nom. sing.** ունեն **-ος** վերջավորություն՝ ἀγαθός եւ **չեզոք սեռի** ածականները, որոնք **Nom. sing.** ունեն **-ον** վերջավորությունը՝ ἀγαθόν: Առաջին հոլովման իգական սեռի ածականները, որոնք հիմքում ունեն **ε, ι, ρ,** **Nom. sing.** ստանում են **α** վերջավորությունը, իգական սեռի այլ հիմքով ածականները **Nom. sing** ստանում են **η** վերջավորությունը:

Masc.	Femin.	Neutr.	
ἅγιος	ἅγια	ἅγιον	սուրբ
πονηρός	πονηρά	πονηρόν	չար, վատ
ἀληθινός	ἀληθινή	ἀληθινόν	ճշմարիտ
καινός	καινή	καινόν	նոր

Իգական սեռի ածականները հոլովվում են առաջին, իսկ արական եւ չեզոք սեռի ածականները երկրորդ հոլովման գոյականների պես:

Sing.	Masc.	Femin.	Neutr.
Nom.	ἀγαθός	ἀγαθή	ἀγαθόν
Gen.	ἀγαθοῦ	ἀγαθῆς	ἀγαθοῦ
Dat.	ἀγαθῷ	ἀγαθῇ	ἀγαθῷ
Acc.	ἀγαθόν	ἀγαθήν	ἀγαθόν
Voc.	ἀγαθέ	ἀγαθή	ἀγαθόν
Plural.	Masc.	Femin.	Neutr.

Nom.	ἀγαθοί	ἀγαθαί	ἀγαθά
Gen.	ἀγαθῶν	ἀγαθῶν	ἀγαθῶν
Dat.	ἀγαθοῖς	ἀγαθαῖς	ἀγαθοῖς
Acc.	ἀγαθούς	ἀγαθάς	ἀγαθά
Voc.	ἀγαθοί	ἀγαθαί	ἀγαθά

Sing.	Masc.	Femin.	Neutr.
Nom.	δίκαιος	δίκαια	δίκαιον
Gen.	δικαίου	δικαίας	δικαίου
Dat.	δικαίῳ	δικαίᾳ	δικαίῳ
Acc.	δίκαιον	δίκαιαν	δίκαιον
Voc.	δίκαιε	δίκαια	δίκαιον
Plural.	Masc.	Femin.	Neutr.
Nom.	δίκαιοι	δίκαιαι	δίκαια
Gen.	δικαίων	δικαίων	δικαίων
Dat.	δικαίοις	δικαίαις	δικαίοις
Acc.	δικαίους	δίκαιας	δίκαια
Voc.	δίκαιοι	δίκαιαι	δίκαια

Որոշ ածականներ արական եւ իգական սեռում ունեն միայն օժ վերջավորություն՝ αἰώνιος (masc. femin.), αἰώνιον (neutr.) հավիտենական՝ օրինակ՝

ὁ ἄπιστος ἄνθρωπος	անհավատ մարդ
ἡ ἄπιστος παιδίσκη	անհավատ աղջիկ
τὸ ἄπιστον παιδίον	անհավատ մանուկ

ԱՇՄԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ա. Ածականը որպես հատկանիշ

Հին հունարենում ածականը կարող է ունենալ հոդ կամ գործածվել առանց հոդի, այն կարող է լինել նախադաս կամ ետադաս՝

Յովհ. Բ.6 *ἦσαν δὲ ἐκεῖ λίθιναι ὑδρίαι ἐξ* - Անդ էին *թակոյկք կճեայք* վեց:

Մատթ. Գ. 10 *πᾶν οὖν δένδρον μὴ ποιοῦν καρπὸν καλὸν* – ամենայն ծառ որ ոչ ամենիցե *գուտուղ բարի*:

Ինչպես տեսնում ենք գրաբարում ածականը երկու դեպքում էլ ետադաս է:

Եթե հունարենում ածականը հոդ ունի, ապա այն հանդես է գալիս որպես գոյականի հատկանիշ: Եթե այն նախադաս է, ապա գոյականի վրա հոդ չի դրվում, եթե ածականը ետադաս է, հոդը դրվում է ե՛լ գոյականի եւ՛ ածականի վրա: Ետադաս դիրքում ածականի հոդը գրաբար թարգմանության բնագրերում դրվում է ոչ թե ածականի, այլ գոյականի վրա՝

Յովհ. Ա.9 *ἦν τὸ φῶς τὸ ἀληθινόν* - Էր *լոյսն ճշմարիտ*:

Մատթ. Դ.5 *τότε παραλαμβάνει αὐτὸν ὁ διάβολος εἰς τὴν ἀγίαν πόλιν* - Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ *ի քաղաքն սուրբ*:

Եթե հունարենում ածականը հոդ ունի եւ նախադաս է, ապա գրաբար թարգմանության մեջ նախադաս դիրքում ածականը հոդ չի ստանում:

Յովհ. Բ.10 *πᾶς ἄνθρωπος πρῶτον τὸν καλὸν οἶνον* τίθησιν - Ամենայն մարդ^ա *զանոյշ զհինի* յառաջագո՞յն պաշտէ.

Հռովմ. Ա.23 *καὶ ἥλλαξαν τὴν δόξαν τοῦ ἀφθάρτου θεοῦ ἐν ὁμοιώματι εἰκόνοσ φθαρτοῦ ἀνθρώπου* - Եւ փոխեցին զփառս *անեղծին Աստուծոյ^ա* ի նմանութիւն պատկերի *եղծանելի^օ մարդոյ*

Թեք հիշովներում դրված գոյականներն ու ածականները գրաբարում նույնպես հիշովում են, հատկապես, երբ ածականները ետադաս են:

Յովհ.Բ.1 *καὶ τῆ ἡμέρα τῆ τρίτη* γάμος ἐγένετο ἐν Κανὰ τῆς Γαλιλαίας - Եւ *յաւուրն երրորդի^ա* հարսանիք էին ի Կանա գալիլեացոց:

Հռովմ. Ա.2 *διὰ τῶν προφητῶν αὐτοῦ ἐν γραφαῖς ἀγίας* - ի ձեռն մարգարեից իւրոց *գրովք սրբովք*:

Եթե գոյականն ունի դերանուն լրացում, ապա այն դրվում է ածականի եւ գոյականի միջեւ:

Հռովմ. Ե.6 *τοῦτο γινώσκοντες ὅτι ὁ παλαιὸς ἡμῶν ἄνθρωπος* συνεσταυρώθη - Չայս զիտասջի^օք զի *հին մարդն մեր* խաչակի^օց եղեւ *նրա*:

Հռովմ. Ա.21 *καὶ ἐσκοτίσθη ἡ ἀσύνετος αὐτῶν καρδία* - Եւ խաւարեցան *անմտութեամբ սիրտք նոցա*:

Մարկ.Ա.11. *καὶ φωνὴ ἐγένετο ἐκ τῶν οὐρανῶν σὺ εἶ ὁ υἱός μου ὁ ἀγαπητός* - *Ղու եւ որդի իմ սիրելի*:

Հռովմ. Ձ. 12 ¹² *μὴ οὖν βασιλεύετω ἡ ἁμαρτία ἐν τῷ θνητῷ ὑμῶν σώματι* Մի^օ այսուհետեւ թագաւորեցեն մեղք *ի մահկանացու մարմինս ձեր*:

Անձնանունների հետ նախադաս դիրքում ածականը հոդ չի ստանում, գրաբար թարգմանության մեջ որոշյալ հոդը դրվում է գոյականի վրա, քանի որ գրաբարում, եթե անձնանունն ունի նախադաս ածական կամ գոյական լրացում, ապա վերջինիս վրա դրվում է -ն որոշիչ հոդը.

Մատթ. Ա. 24 *καὶ ἀπῆλθεν ἡ ἀκοὴ αὐτοῦ εἰς ὅλην τὴν Συρίαν* - Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորաց:

Բ. Ածականների գոյականաբար գործածությունը

Հին հունարենում ածականը կարող է գործածվել գոյականի փոխարեն, սեռային հատկանիշներ եւ թիվ ցույց տվող հոդերի միջոցով կամ առանց հոդերի: Յովհ. Գ. 12 *εἰ τὰ ἐπίγεια εἶπον ὑμῖν ... ἔὰν εἴπω ὑμῖν τὰ ἐπουράνια* - Իսկ արդ՝ եթե *գերկրաւորս* ասացի ձեզ, եւ ոչ հաւատայք. զիա՞րդ եթե *գերկնաւորսն* ասացից...: *τὰ ἐπίγεια* եւ *τὰ ἐπουράνια* ածականները նշանակում են *երկրային եւ երկնային* բաներ, իրողություններ:

Հռովմ. Բ. 16 *ἐν ἡμέρᾳ ὅτε κρίνει ὁ θεὸς τὰ κρυπτὰ* - յաւուրն յորում դատիցի Աստուած *զգաղտնիս* մարդկան:

Հռովմ. Ա.7. *πᾶσιν τοῖς οὖσιν ἐν Ῥώμῃ ἀγαπητοῖς θεοῦ κλητοῖς ἁγίοις* - Ամենեցուն որոց էք ի Հռովմ՝ *սիրելեաց* Աստուծոյ *կոչեցելոց սրբոց*

Հռովմ. Գ.10 *καθὼς γέγραπται ὅτι οὐκ ἔστιν δίκαιος οὐδὲ εἷς* - Որպէս եւ գրեալ, թէ ոչ գոյ *արդար* եւ ոչ մի.

3. Ածականի գործածությունը որպէս ստորոգյալի մաս

Լինել բայի հետ ածականը նախադաս կամ ետադաս դիրքով կարող է ստորոգյալի մաս կազմել: Ածականը եւ գոյականը դրվում են ուղղական հոլովով: ՆԿ-ում նման կառույցներում լինել բայը հաճախ զեղչվում է: Որպէս ստորոգյալի մաս ածականը գործածվում է առանց հոդի՝

Հռովմ. Բ.13 *οὐ γὰρ οἱ ἀκροαταὶ νόμου δίκαιοι παρὰ τῷ θεῷ* - Զի ոչ եթէ որ լսելիք արինացն են՝ *արդարացեալ* են առաջի Աստուծոյ.

Մատթ. Ե.3 *μακάριοι οἱ πτωχοὶ τῷ πνεύματι* - *Երանի աղքատաց* հոգով. (Երանի են հոգով աղքատները)

Հռովմ. Դ.8 *μακάριος ἀνὴρ* - *Երանեալ* է այր

Հոով. Է.8 արիս րնր նոուս *նարտիա նեկրն* - զի առննց աւրինաց մեղրն մեռեալ էին:

ՆԿուի առավել հաճախ գործածված առաջին եւ երկրորդ հոովման ածականներ

Հոովում են ինչպես նրդոս		Հոովում են ինչպես ճիկուոս	
նրդոս, հ, ոն	բարի, լավ	նրդոս	սուրբ
նրդոս, հ, ոն	նրդոս	նրդոս, ն, ոն	արժանի
նրդոս, հ, ոն	սիրելի	ճեճոս, ն, ոն	ար
ճոսնոս, հ, ոն	նոճեղ, կարող	ճեճուրոս, ն, ոն	երկրորդ
նրոսոս, հ, ոն	ոսրարանոս	ճիկուոս, ն, ոն	արդար
նրոսոս, հ, ոն	ոնոսրյալ	նրնոս, ն, ոն	արդատ
նրոսոս, հ, ոն	մրոսոս	նրոս	ամայի
ոսոս, հ, ոն	կեռնանի, անմահ	նրոս, ն, ոն	այլ, ուրիշ
նրոս, հ, ոն	արժանի	նրոս, ն, ոն	նույն, ոսրային
նրոս, հ, ոն	նր	նրոսոս, ն, ոն	նոճեղ
նրոս, հ, ոն	ոսր, վատ	նրոս, ն, ոն	մարուր, անբիճ
նրոս, հ, ոն	գեղեղիկ	նրոս, ն, ոն	երանելի, երջանիկ
նրոս, հ, ոն	ոսրոս	նրոս, ն, ոն	մեճ
նրոս, հ, ոն	սայնոս	նրոս, ն, ոն	փոքր
նրոս, հ, ոն	մնացած	նրոս, ն, ոն	անթիվ, անհամար
նրոս, հ, ոն	մրոս	նրոս, ն, ոն	մեռյալ
նրոս, հ, ոն	մհակ	նրոս, ն, ոն	նր, երիտասարդ
նրոս, հ, ոն	փոքր, փոքրաթիվ	նրոս, ն, ոն	
նրոս, հ, ոն	նրիղ, ոսրիղ կանոս	նրոս (նրոս) ն, ոն	նույն, նման, ոսրային
նրոս, հ, ոն	հավատարիմ	նրոս, ն, ոն	սուրբ, անարատ
նրոս, հ, ոն	հոգելոս	նրոս, ն, ոն	հին
նրոս, հ, ոն	առաջին	նրոս, ն, ոն	հարուստ
նրոս, հ, ոն	արդատ	նրոս, ն, ոն	ոսր, վատ
նրոս, հ, ոն	անորանիկ	նրոս, ն, ոն	ոսր, փջացած
նրոս, հ, ոն	երրորդ	նրոս, ն, ոն	կատարյալ
նրոս, հ, ոն	ինաստուոն	նրոս, ն, ոն	բացահայտ, ակնհայտ, հայտնի
նրոս, հ, ոն	կոսր	երկու վերջավորոսյալ	

		αδελφάνητες	
χωλός, ή, όν	λαη	άπιστος, ον	անհավատ
ψυχικός ή, όν	ιγνιթական	άκάθαρτος, ον	անմաքուր
		άδικος, ον	անարդար
		αίώνιος, ον	հավիտենական
		άμαρτωλός, ον	մեղավոր
		άνθρωποκτόνος, ον	մարդասպան
		άτιμος, ον	անարգ
		βάρβαρος, ον	բարբարոսական
		έπίγειος, ον	երկրային
		έτοιμος, ον	պատրաստ

Վարժություններ

Ա. Թարգմանք, դուրս բերք αδελφանով բառակապակցությունները .

1. ό Ιησους ήν έν έρήμω τόπω συν τοίς θηρίοις. 2. ή διδαχή του προφήτου καινή έστιν. 3. έγώ είμι ή άμπελος ή άληθινή. 4. ω αγαπητοί, νυν τέκνα θεού έσμεν και όμοιοι τω θεω έσόμεθα. 5. κύριός έστιν ό Υίος του άνθρώπου και του σαββάτου. 6. άγιοί έστε έν ποιηρω κόσμω. 7. ον γαρ έστιν κρυπτόν ό ον φανηρόν γενήσεται. 8. μακάριοι οι πτωχοί τω πνεύματι. 9. ον δύναται δένδρον άγαθόν καρπούς ποιηρούς ποιείν, ονδè δένδρον σαπρόν καρπούς καλοους ποιείν. 10. ει τα έπίγεια είπον ύμιν και ον πιστεύετε, πως έαν είπω ύμιν τα έπουράνια πιστεύσετε;

Բ. Թարգմանք հունարեն՝

սուրբ օրենք, բարի մարդ, գեղեցիկ ծառեր, ճշմարիտ ուրախունկ, հին թիկնոց, հավիտենական սեր, մարդու ծովեր, անարգ մարգարե, սիրելի աշակերտներ, նոր գինի, կույր աղջիկ, երկնային թագավորություն, երկրային պատմություն:

Գ. Ավելացրեք αδελφանների վերջավորությունները՝

ό νόμος άγι... και η έντολη... άγι... και... δικαί... και... άγαθ..., τω... άσθενούντ...
 τυφλ... χωλ... ξηρ..., ζωη... αίώνι..., έργου άγαθ..., έν γραφαι... άγι...

ԴԱՍ 8

Ա. Ներգործական անցյալ անկատար

Բ. Ածանցավոր բայեր

Գ. *Լինել* բայի խոնարհումը Imperfectum ժամանակում

IMPERFECTUM INDICATIVI ACTIVI ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Imperfectum -ը անցյալ շարունակական ժամանակ է, որը կարող է ցույց տալ նաև անցյալում կրկնվող կամ նպատակ ունեցող գործողության ժամանակ:

Imperfectum -ը կազմելու համար ներկայի հիմքին սկզբից ավելացնում ենք € աճականը և ներկայի հիմքին կից **Imperfectum**-ի վերջավորությունները.

€ աճական + հիմք + դիմային
վերջավորություններ

Imperfectum - ի դիմային վերջավորություններն են՝

Sing.	Plur.
1. օν	ομειν
2. ες	ετε
3. ε(ν)	ον

Խոնարհենք *λύω* արձակել բայը

Sing.		Plur.	
1. <i>λύον</i>	արձակում էի	1. <i>λύομεν</i>	արձակում էինք
2. <i>λύες</i>	արձակում էիր	2. <i>λύετε</i>	արձակում էիք
3. <i>λύε(ν)</i>	արձակում էր	3. <i>λύον</i>	արձակում էին

Մատթ.Ե.2 και ανοίξας τὸ στόμα αὐτοῦ *έδίδασκεν* αὐτοὺς λέγων - Եւ բացեալ զբերանի իր *μιμιγῶντήν* զնոսա եւ ասէր:

